ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.12.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/266

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Մասնակից՝ «Վանդիստ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-116/20» ծածկագրով գնանշման հարցում, համակարգիչների և պատճենահանող սարքավորումների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 19.11.2020թ.-ի թիվ 26/26/17079-2020 գրությամբ «Վանդիստ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 11.11.2020թ.-ի թիվ Ե/40/2145-20 գրության հիման վրա, 19.11.2020թ.-ին «Վանդիստ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 19.11.2020թ.-ին:

19.11.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/266 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 04.12.2020թ.-ին:

2. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն 11.11.2020թ.-ի թիվ Ե/40/2145-20 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ կողմից (այսուհետ՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ) սեփական կարիքների համար համակարգիչների և պատճենահանող սարքավորումների ձեռք բերման նպատակով հրապարակվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-116/20» ծածկագրով գնման ընթացակարգը, որին ի թիվս մյուս մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Վանդիստ» ՍՊԸ-ն: Մասնակցության հայտի գնահատման արդյունքում «Վանդիստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված մասնակցության հայտում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ, այն է մասնակցության հայտի հավելված 1-ում գործունեության հասցեն նշված է եղել Նալբանդյան 17/30, Սայաթ-Նովա 24/2, ինչպես նաև արձանագրվել են անհամապատասխանությունների հրավերի պահանջների նկատմամբ հավելված 1.1-ում:

Գնահատող հանձնաժողովը, առաջնորդվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշման Հավելված 1-ի (գնումների գործընթացի կազմակերպման կարգ) 41-րդ կետով, ս/թ նոյեմբերի 4-ի թիվ 2 որոշմամբ նիստը կասեցրել է և «Վանդիստ» ՍՊԸ

առաջարկել հստակեցնել ընկերության գործունեության հասցեն, ինչպես նաև հավելված 1.1-ում առկա անհամապատասխանությունները:

Գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերջնաժամկետ է սահմանվել (կասեցման ժամկետի ավարտ) 05.11.2020թ. ժամը 16:30-ը: Մինչև կասեցման ժամկետի ավարտը «Վանդիստ» ՍՊԸ կողմից ստացվել է շտկված և հրավերի պահանջներին բավարարող հավելված 1.1, սակայն շտկված հավելված 1-ը ստացվել է կասեցման ժամկետի ավարտից հետո, որը հանձնաժողովի կողմից չի դիտարկվել: Առաջնորդվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշման Հավելված 1-ի (գնումների գործընթացի կազմակերպման կարգ) 42-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովի ս/թ նոյեմբերի 6-ի թիվ 2.1 որոշմամբ «Վանդիստ» ՍՊԸ մասնակցության հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի (Գնումների գործընթացի կազմակերպման կարգ) 45-րդ կետի համաձայն Ձեր դիտարկմանն եմ ներկայացնում «Վանդիստ» ՍՊԸ կողմից գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունների խախտումն հիմնավորող փաստաթղթերը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-116/20» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Վանդիստ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Վանդիստ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 19.11.2020թ.-ի գրությամբ դիմել է «Վանդիստ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.11.2020թ.-ի թիվ 26/26/17079-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, 22.11.2020թ.-ին ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««Պատվիրատուի կարիքների համար համակարգիչների և պատճենահանող սարքավորումների գնման ընթացակարգ է նախաձեռնվել:

04.11.2020թ.-ին կազմվել է արձանագրություն համար 2 (այսուհետ նաև՝ Արձանագրություն 2): Արձանագրություն համար 2-ի 6-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ Վանդիստ ՍՊԸ մասնակցության հայտի հավելվածներում արձանագրվել են անհամապատասխանություններ: Մասնավորապես հավելված 1-ում նշված հասցեն հստակ չէ, իսկ հավելված 1.1-ում արձանագրվել անհամապատասխանություններ: Հղում կատարելով ՀՀ կառավարության 04.05.2017թ .թիվ 526-Ն որոշմանը (այսուհետ նաև՝ Որոշում) առաջարկվել է շտկել արձանագրված անհամապատասխանությունները սահմանելով ժամկետ 05.11.20թ. 16.30:

05.11.2020թ.-ին Վանդիստ ՍՊԸ-ի կողմից հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկվել են և շտկված հայտը կրկին ներկայացվել է:

06.11.2020թ.-ի արձանագրություն թիվ 2.2-ի համաձայն (այսուհետ նաև՝ Արձանագրություն 2.2.) 1.1. առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը հանձնաժողովը գնահատել է բավարարել, սակայն հանձնաժողովը արձանագրեց, որ Վանդիստ ՍՊԸ-ի կողմից շտկված հավելված 1-ը ստացվել է 08:37p.m. և որոշում է կայացրել չդիտարկել շտկված հավելված մեկը և անբավարար գնահատեց այն: Այսպիսով Վանդիստ ՍՊԸ մասնակցության հայտը գնահատեց անբավարար և մերժեց:

Պատվիրատուի գրության համաձայն Վանդիստ ՍՊԸ-ի կողմից ներկայացված մասնակցության հայտում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ, այն է մասնակցության հայտի հավելված մեկում գործունեության հասցեն նշված է եղել Նալբանդյան 17/30 և Սայաթ-Նովա 24/2, ինչպես նաև արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ հավելված 1.1-ում: Մինչև կասեցման ժամկետի ավարտը Վանդիստ ՍՊԸ-ի կողմից ստացվել է շտկված և հրավերի պահանջներին բավարարող հավելված 1.1., սակայն շտկված հավելված 1-ը ստացվել է կասեցման ժամկետի ավարտից հետո, որը հանձնաժողովի կողմից չի դիտարկվել:

19.11.2020թ ձեռնարկվել է «Վանդիստ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ ՍՅ-ԼՕ-2020/266:

Վանդիստ ՍՊԸ-ի հայտում արձանագրվել անհամապատասխանություններ՝ 1-ին հավելվածում գործունեության հասցեի հետ կապված, որտեղ նշված է եղել գործունեության երկու հասցե և 1.1. հավելվածում:

Անհամապատասխանությունները շտկվել են և ներկայացվել 05.11.2020 թ.-ին:

Հանձնաժողովն սահմանված ժամկետում ներկայացված է համարել և գնահատել բավարար միայն 1.1. հավելվածի շփկումները, իսկ գործունեության հասցե հետ կապված անհամապատասխանության շփկումը դիտարկել է ժամկետից ուշ ներկայացված, որի արդյունքում մասնակցի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:

Ամբողջությամբ առարկում ենք ընթացակարգին հետևյալ հիմքերով և հիմնավորումներով: Առարկության առաջին հիմք:

Չկա օրենսդրությամբ նախատեսված որևէ հիմք Վանդիստ ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրելու համար:

Համաձայն ՀՀ գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ... գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Քանի որ բ և գ ենթակետերը վերաբերելի չեն սույն գործընթացի հետ անդրադառնանք ա ենթակետում սահմանված պահանջներին: Սույն գնման գործընթացի շրջանակում Վանդիստ ՍՊԸ-ն չի խախտել պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը: Վանդիստ ՍՊԸ-ի մասնակցությունը գնման գործընթացին ոչ թե դադարել է, այլ Վանդիստ ՍՊԸ-ի ներկայացված հայտը պարզապես գնահատվել է անբավարար և մերժվել է համաձայն Արձանագրության 2.2.-ի: Գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցումը և հայտի անբավար գնահատումը երկու տարբեր իրավական գործընթացներ են: Առաջինի դեպքում ենթադրվում է, մասնակցի կողմից որևէ

էական պարտականության չկատարման արդյունքում սանկցիայի կիրառում մասնավորապես մասնակցության դադարեցում: Մինչդեռ երկրորդ և սույն գործընթացի դեպքում մասնակցի ներկայացված հայտը գնահատվել է անբավարար, որը ենթադրում է բնականոն գործընթաց, հայտը դիտարկվել է, սակայան որոշ անհամապատասխանությունների պատճառով գնահատվել է անբավարար: Միևնույն ժամանակ հայաը գնահատվել է անբավարար և մերժվել միայն այն հիմքով, որ մասնակիցը, որպես գործունեության հասցե նշել է երկու հասցե, իսկ շտկված տարբերակը ներկացրել է նոյեմբերի հինգին, սակայն հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետից ավելի ուշ ներկայացված է համարվել և չի քննարվել:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ Վանդիստ ՍՊԸ-ն իր որևէ օրենսդրական պարտականություն չի խախտել և հետևաբար նրա նկատմամբ չեն կարող կիրառվել որևէ պատասխանատվության միջոցներ:

Առարկության երկրորդ հիմք:

Վանդիստ ՍՊԸ-ի կողմից չի խախտվել որևէ ժամկետ:

Վանդիստ ՍՊԸ-ին ներկայացվել են հայտնաբերված անհամապատասխանությունները շտկելու համար ժամանակ, որը կատարվել է Վանդիստ ՍՊԸ-ի կողմից:

Որոշման 41-րդ կետի համաձայն՝ Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ (...)ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: (...) Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայ տնաբերված անհամապատասխանությ ունները:

Հարկ է ուշադրություն դարձնել այն փաստերին, որոնք հակասում են Որոշման պահանջներին:

Առաջինը Որոշման 41-րդ կետի համաձայն անհամապատասխանությունները արձանագրվում են հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում, մինչդեռ համաձայան Արձանագրություն 2-ի տեղի է ունեցել հայտերի բացման և գնահատման նիստի ամփահում, այսպիսով հանձնաժողովը իրավասության չուներ դիմելու մասնակցին աեհամապատասխանություեեերը շտկելու համար, քանի որ չի կատարել դա հայտերի բացման ու գնահատման նիստի ժամանակ:

Երկրորդ: Որոշման 41-րդ կետի համաձայն սահմանվում է կասեցում մեկ աշխատանքային օրով: Հարկ է նկատել, որ նիստը տեղի է ունցել նոյեմբերի 4-ին ժամը 15-ի, իսկ ծանուցումն ուղարկվել է նույն օրը ժամը 17-ից հետո և Արձանագրություն 2-ում առաջարկվել է հայտնաբերված անհամապատասխանությունները շտկել և ուղարկել մինչև կասեցման ավարտը՝ նոյեմբերի 5-ը ժամը ժամը 16:30: Այսպիսով, ակնհայտորեն չի պահպանվել Որոշմամբ սահմանված մեկօրյա աշխատանքային կասեցման պահանջը:

Դեռ ավելին Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի համաձայն՝ Եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն: Շտկված տարբերակը ներկայացնելու վերջին օր է սահմանվել նոյեմբերի հինգը և Վանդիստ ՍՊԸ-ի կողմից անհամապատասխանությունների շտկումները ներկայացվել են 05.11.2020թ.-ին մինչև 24:00, հետևաբար անհիմն են հանձնաժողովի պնդումները, որի համաձայն սահմանված ժամկետում ընդունված է համարվել միայն 1.1. հավելվածում արձանագրված անհամապատասխանությունների շտկումները: Հավելված մեկում արձանագրված շտկումները ևս պետք է ընդունվեին համաձայն օրենքի պահանջերի:

Միևնույն ժամանակ, Որոշումը պահանջում է, որ մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվեն հայտնաբերված անհամապատասխանությունները: Անդրադառնալով, հավելված 1-ում արձանագրված անհամապատասխանությանը՝ գործունեության երկու հասցե նշելու վերաբերյալ, անհրաժեշտություն է առաջանում ընդգծել, որ նման անհամապատասխանություն արձանագրելը դուրս է հանձնաժողովի իրավասություններից, քանի որ մասնակիցը նշել է իր փաստացի գործունություն ծավալելու երկու հասցեները, իսկ առհասարակ գործունեության հասցե սահմանումը բացակայում է Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին ՀՀ օրենքում: Գործունեության հասցե սահմանված չէ նաև և ՀՀ քաղաքացիական օրենսգրքում և ոչ էլ այլօրենսդրական ակտերում: Այդ իսկ պատճառով մասնակիցն ազատ է նշելու իր նախընտրած գործունության հասցեն:

Այսպիսով հանձնաժողովը կանխակալ մոտեցում է ցուցաբերել Վանդիստ ՍՊԸ-ի նկատմամբ, առաջինը արձանագրելով գործունեության հասցեի վերաբերյալ անհամապատասխանություն, որն իրականում չի հանդիսանում անհամապատասխանություն և շտկման ենթակա չէ, իսկ այնուհետև գնահատելով շտկված «անհամապատասխանությունը» ժամկետից դուրս ներկայացված խախտելով օրենսդրի կողմից սահմանված գործողության կատարման ժամկետները:

Անհասկանալի է նաև, թե երբ է պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացրել համապատասխան գրությունը, քանի որ գրության մեջ ամսաթիվ նշված չէ, իսկ Որոշման 45-րդ կետի համաձայն այն հստակ ժամկետենր ունի և եթե այդ ժամկետները չեն պահպանվել, ապա գործընթացն առհասարակ անվավեր է:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը գտնում ենք, որ բացակայում է որևէ հիմք «Վանդիստ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:»:

4. <u>ՍՑ-LO-2020/266 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից համակարգիչների և պատճենահանող սարքավորումների ձեռքբերման նպատակով 22.10.2020թ.-ին հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-116/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Վանդիստ» ՍՊԸ-ն:

iii. «Վանդիստ» ՍՊԸ-ն թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանն մասնակցելու դիմում-հայտարարությամբ հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-116/20» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ՝ կից ներկայացնելով Ընկերության կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն թիվ 1.1 հավելվածի:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 04.11.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Վանդիստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված մասնակցության հայտի.

- Հավելված 1-ում նշված հասցեն հստակ չէ,

- 3-րդ չ/բ կոշտ սկավառակի հիշողության ծավալը սխալ է նշված (1000Gb-ն 1 T չէ),

- Հավելված 1.1-ում որպես ապրանքի անվանում նշված են 2-րդ և 3-րդ չ/բ համար համակարգիչ լրակազմ, իսկ 5-րդ չ/բ դյուրակիր համակարգիչ, իսկ հրավերով սահմանված են համապատասխանաբար «համակարգիչ» և «նոութբուք»:

- 6-րդ չ/բ համար հրավերով սահմանված է ֆուլ ՀԴ 1920x1080 75Հց-ի ժամանակ, իսկ առաջարկվող մոդելի դեպքում 1920x1080 ստացում է 60Հց-ի ժամանակ:

v. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշման հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ կետը, որոշել է մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել և առաջարկել Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 05.11.2020թ.-ին ժամը 16:30-ը շտկել արձանագրված անհամապատասխանությունները՝ ներկայացնելով շտկված հավելվածները:

vi. Հանձնաժողովի 06.11.2020թ.-ի նիստի թիվ 2.1 արձանագրության համաձայն՝ «Վանդիստ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է շտկված թիվ 1.1 հավելվածը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, ինչը Հանձնաժողովի կողմից գնահատվել է բավարար: Սակայն Ընկերության կողմից շտկված թիվ 1 հավելվածը գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլ. փոստի հասցեին ստացվել է միայն 08:37pm (սահմանված ժամը լրացել է 16:30-ին), ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է չդիտարկել շտկված թիվ 1 հավելվածը, «Վանդիստ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.11.2020թ.-ի թիվ 26/26/17079-2020 գրությամբ «Վանդիստ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է

պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն Ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի

ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են՝

1) օրենքով նախատեսված պայմանագրերից և այլ գործարքներից, ինչպես նաև այն պայմանագրերից ու գործարքներից, որոնք թեև օրենքով նախատեսված չեն, սակայն դրան չեն հակասում.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերից, որոնք օրենքով նախատեսված են որպես քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմք.

3) քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտից.

4) օրենքով թույլատրվող հիմքերով գույք ձեռք բերելու հետևանքով.

5) գիտության, գրականության, արվեստի ստեղծագործություններ, գյուտեր և մտավոր գործունեության այլ արդյունքներ ստեղծելու հետևանքով.

6) այլ անձին վնաս պատճառելու հետևանքով.

7) անհիմն հարստացման հետևանքով.

8) քաղաքացիների և իրավաբանական անձանց այլ գործողությունների հետևանքով.

9) այնպիսի իրադարձությունների հետևանքով, որոնց հետ օրենքը կամ այլ իրավական ակտը կապում է քաղաքացիական իրավական հետևանքների առաջացում:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է **մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը:

Նույն կետի «զ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է նաև ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է...:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից համակարգիչների և պատճենահանող սարքավորումների ձեռքբերման նպատակով 22.10.2020թ.-ին հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-116/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 7.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 7.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 7.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը

դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից համակարգիչների և պատճենահանող սարքավորումների ձեռքբերման նպատակով 22.10.2020թ.-ին հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-116/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Վանդիստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված մասնակցության հայտում Հանձնաժողովի 04.11.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ թիվ 1 և թիվ 1.1 հավելվածներում արձանագրվել են մի շարք անհամապատասխանություններ, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել և առաջարկել Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 05.11.2020թ.-ին ժամը 16:30-ը շտկել արձանագրված անհամապատասխանությունները՝ ներկայացնելով շտկված հավելվածները: Հանձնաժողովի 06.11.2020թ.-ի նիստի թիվ 2.1 արձանագրության համաձայն՝ «Վանդիստ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է շտկված թիվ 1.1 հավելվածը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, ինչը Հանձնաժողովի կողմից գնահատվել է բավարար: Սակայն Ընկերության կողմից շտկված թիվ 1 հավելվածը գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլ. փոստի հասցեին ստացվել է միայն 08:37pm (սահմանված

ժամը լրացել է 16:30-ին), ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է չդիտարկել շտկված թիվ 1 հավելվածը, վերջինիս հայտը գնահատել անբավարար և մերժել:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք

ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Մասնակցի ներկայացրած դիրքորոշման հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է և այդ կետի իմաստից բխում է, որ հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված՝ շտկման ենթակա անհամապատասխանություններն ենթակա են շտկման՝ հանձնաժողովի քարտուղարի կողմից Մասնակցին էլեկտրոնային եղանակով ուղարկված ծանուցման ստացման պահից հաշված **մեկ աշխատանքային օրյա ժամկետում**: Ընդ որում, օրերով հաշվարկվող ժամկետը լրանում է այդ ժամկետի վերջին օրը, իսկ եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն («Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք 31-րդ և 32-րդ հոդվածներ):

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Օրենսդիրը, արձանագրված անհամապատասխանությունների շտկում ներկայացնելու պարտականության կատարման համար, սահմանելով այդպիսի պահանջ ստանալու պահից հաշված 1 աշխատանքային օրյա ժամկետ, գնման գործընթացի մասնակիցներին ընձեռել է այն օբյեկտիվ ժամանակահատվածը, երբ վերջիններս կարող են իրացնել Օրենքով և Կարգով սահմանված՝ արձանագրված անհամապատասխանությունների շտկելու պարտավորությունը: Ուստի սահմանված պատասխանատվության միջոցները կարող են ի հայտ գալ միայն սահմանված ժամկետի ավարտմամբ կամ մասնակցի կողմից այնպիսի գործողություններ կատարելու արդյունքում, որոնք վկայում են վերջինիս կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելուց հրաժարվելու մասին:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Պատվիրատուն և Հանձնաժողովը գնման գործընթացի մասնակիցների հայտերի գնահատումն իրականացնելիս չպետք է վերջիններին ծանրաբեռնեն այնպիսի պարտականություններով, որոնք ուղղված են ձևական պահանջների պահպանմանը, կամ, առավել ևս, մերժեն ներկայացված հայտերը, եթե մասնակիցների վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

Ինչպես Օրենքի իմաստից է բխում, որ գնման գործընթացի շրջանակներում ներկայացված հայտերի գնահատումը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

Տվյալ պարագայում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Հանձնաժողովը կիրառելով Կարգի 41-րդ և գնման ընթացակարգի հրավերի 7.9-րդ կետերը, այն է՝ ծանուցել է Մասնակցին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը, այն է՝ 05.11.2020թ.-ին ժամը 16:30-ը, շտկել Հավելված N 1-ում և Հավելված N 1.1-ում առկա անհամապատասխանությունները, գործել է ոչ իրավաչափ, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգով և «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից համակարգիչների և պատճենահանող սարքավորումների ձեռքբերման նպատակով 22.10.2020թ.-ին հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-116/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված չէ որևէ դրույթ՝ գնահատող հանձնաժոովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների շտկման համար նախատեսված մեկ աշխատանքային օրվա ժամանակային սահմանափակման մասին, որպիսի պայմաններում գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է Կարգով և Հրավրով սահմանված և Ընկերությանը ընձեռնված շտկման հնարավորության ժամանակահատվածը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Վանդիստ» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումն ոչ իրավաչափ է և չի բխում Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, Կարգի 41-րդ և Հրավերի 7.9-րդ կետերով սահմանված պահանջներից:

Ուստի, վերոնշյալների հաշվառմամբ, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում

նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.11.2020թ.-ի թիվ 26/26/17079-2020 գրությամբ «Վանդիստ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/266 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**